

”

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՅՈՒՄՆԻՄԱՅԻՆ ՀԱՄԱԼՄԱՐԱՆ

ՖԱԿՈՒԼՏԵՏ՝ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
ԱՄԲԻՈՆ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԹԵՄԱ՝ Դասվարի գործունեությունը հանրակրթական դպրոցում

/ The work of class teacher in primary school /

ՄԱԳԻՍՏՐՈՍ՝ Հասակ Արմենի Փոքրիկյան
ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ մ.գ.թ., Ս. Հովհաննիսյան

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակով պայմանավորված՝ աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները .

1. Բացահայտել դասվարի գործունեության նպատակը, խնդիրները և առանձնահատկությունները:

2. Ուսումնասիրել դասվարի գործունեության դժվարությունները:

3. Ուսումնասիրել և վերլուծաբար ներկայացնել դասվարի գործունեության պլանավորումը և գործածումը:

Աշխատանքը բավականին արդիական է քանի որ վերջին տարիներին կատարված փոփոխությունները լուրջ ազդեցություն թողեցին ողջ կրթական համակարգի վրա: Այսօր դպրոցական համակարգը դեռևս գտնվում է զարգացման փուլում, որի պատճառով էլ դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ:

Այս աշխատանքի կարևորությունն այն է, որ կրթության բարելավման համար դասվարը ոչ միայն պետք է աշխատի երեխաների հետ, այլև ունենա որոշակի կրթական աշխատանքային պլան, որով էլ պետք է առաջնորդվի՝ երեխաների հետ աշխատելու համար: Կրտսեր դպրոցում պահանջվում է հատուկ մանկավարժական ուշադրություն: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել ժամանակակից երեխայի հիմնարար նոր կենսապայմանները:

Աշխատանքը թույլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել դասվարի աշխատանքային առանձնահատկության, դժվարության և կարևորության մասին: **Հետազոտության նպատակը:** Տեսական և գործնական ուսումնասիրությունների միջոցով բացահայտել ՀՀ հանրակրթական դպրոցներում դասվարի գործունեության առանձնահատկությունները, դերն ու նշանակությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը. ՀՀ հանրակրթական դպրոցներում դասվարի գործունեության համակողմանի վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել ներկա իրավիճակը, ինչպես նաև կանխորոշել հետագա պլաններն ու իրականացվող գործընթացները: Վերլուծել այս թեմայով գրականությունը: Բացահայտել գործունեության էությունը, աշխատանքային առանձնահատկությունները, ինչպես նաև խոսել դասվարի աշխատանքի հիմնական ձևերի և մեթոդների մասին:

Հետազոտության նորույթը և գործնական նշանակությունը. Շարադրանքում բացահայտված դասվարի գործունեության առանձնահատկությունները, ձևերն ու մեթոդները որոշակի մեթոդական ուղեցույց կարող են լինել հանրակրթական դպրոցների դասվարների համար:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը. Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, չորս տրամաբանորեն փոխկապակցված գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: